

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՔԻՄԻԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ
ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ	4
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ.....	6
ՑՈՒՑՈՒՄՆԵՐ.....	6

ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված է «Քիմիա» առարկան դասավանդող ուսուցիչների աստեստավորման քննության թեստի կառուցվածքը, տրված են առաջադրանքների տեսակների նկարագրությունը, գնահատման չափանիշները, դրանց լուծման եղանակների բացատրությունները, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները:

Ուսուցիչների աստեստավորման թեստերի կազմման համար հիմք են ընդունվել «Քիմիա» առարկայի հանրակրթական դպրոցի ծրագրերը:

1. ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Քիմիա» առարկայի ուսուցիչների ատեստավորման թեստից հնարավոր է հավաքել առավելագույնը 60 միավոր, որից 30 միավորը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների, իսկ մնացած 30-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների կատարումից:

Թեստում ընտրովի պատասխանով առաջադրանքները ընդգրկում են քիմիայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները: Դրանք կարող են լինել թեստային առաջադրանքների տեսքով ներկայացված փորձարարական խնդիրներ, գծապատկերներ, համապատասխանություններ, ուրվագրեր, պնդումներ, դիագրամներ և այլն: Կարճ պատասխանով առաջադրանքներն ու ենթաառաջադրանքները ներկայացված են հաշվարկային, փորձարարական ու իրավիճակային խնդիրների, համապատասխանությունների և պնդումների ձևով:

Ուսուցիչների ատեստավորման թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե և թեստավորումը անցկացվելու է համակարգչային եղանակով:

2. ԱՌԱՋԱՐԴԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ:

Ա. *Տրված է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:*

Անհրաժեշտ է նշել ճիշտ պատասխանը համապատասխան վանդակում:

Գնահատման չափանիշը: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Բ. Համապատասխանեցում:

Այսօրինակ առաջադրանքները ներկայացվում են համապատասխան տեղեկություն պարունակող երկու կամ երեք սյունակների ձևով: Առաջադրանքը պահանջում է համապատասխանեցնել սյունակներում ներառված տեղեկությունը և տրված շարքերից որպես պատասխան ընտրել ճիշտ համապատասխանեցված տողերի շարքը:

Այս առաջադրանքների համար անհրաժեշտ է նշել ճիշտ պատասխանի շարքը՝ համապատասխան վանդակում կատարելով նշում:

Գնահատման չափանիշը: Առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

II. Կարճ պատասխանով առաջադրանքներ

Ա. Համապատասխանեցում կարճ պատասխանով:

Այսօրինակ առաջադրանքները ներկայացվում են երկու սյունակով և դրանց տողերի համապատասխանեցումով ձևավորվում է պատասխանը:

Անհրաժեշտ է յուրաքանչյուր տառի դիմացի պատուհանիկից ընտրել ճիշտ պատասխանը:

Գնահատման չափանիշը: Ճիշտ և լիարժեք պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ, թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Բ. Բոլոր ճիշտ պատասխանների ընտրությամբ առաջադրանքներ:

Տրված են քիմիական գործընթացների, երևույթների, քիմիական նյութերի հատկությունների վերաբերյալ պնդումներ, որոնցից անհրաժեշտ է ընտրել բոլոր ճիշտ կամ բոլոր սխալ պատասխաններն ըստ առաջադրանքի պահանջի:

Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է գրել առաջադրանքի պահանջին բավարարող ճիշտ պատասխանների համարները՝ *թվերի աճման կարգով*, պատասխանի համար նախատեսված դաշտում:

Գնահատման չափանիշը: Պատասխանի համար տրվում է մեկ միավոր, եթե թվերի հերթականությունը ճիշտ է դասավորված: Սխալ, թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Գ. Ճիշտ հաջորդականության ընտրությամբ առաջադրանքներ:

Տրված են քիմիական գործընթացների, երևույթների առանձին փուլեր, անհրաժեշտ է ձևավորել տվյալ գործընթացի, երևույթի ճիշտ հաջորդականությունը:

Այս առաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է պատասխանի համար նախատեսված դաշտում մուտքագրել ըստ հաջորդականության ճիշտ պատասխանին համապատասխանող թվերը:

Գնահատման չափանիշը: Պատասխանի համար տրվում է մեկ միավոր, եթե թվերի հերթականությունը ճիշտ է դասավորված: Սխալ, թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

Դ. Մեկ, երկու և երեք ենթաառաջադրանքից կազմված հաշվարկային խնդիրներ:

Հաշվարկներում պետք է օգտագործել հարաբերական ատոմային զանգվածների կլորացված արժեքները (բացի քլորից՝ 35,5), իսկ անհրաժեշտության դեպքում այլ, լրացուցիչ տեղեկությունները տրված կլինեն խնդրի պայմանում:

Այս առաջադրանքներին և ենթաառաջադրանքներին պատասխանելիս անհրաժեշտ է լուծումից ստացած պատասխանը մուտքագրել պատասխանի համար նախատեսված դաշտում առանց չափողականության:

Գնահատման չափանիշը: Պատասխանի համար տրվում է մեկ միավոր, եթե մուտքագրված է ճիշտ պատասխանը: Սխալ, թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

3. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՆՅՈՒԹԸ

«Քիմիա» առարկայի ուսուցչի ատեստավորման թեստում առաջադրանքներն ընտրվում են համաձայն հանրակրթական դպրոցի «Քիմիա» առարկայի ուսումնական ծրագրերի: Ստորև ներկայացված են «Քիմիա» առարկայի հիմնական բաժինները, որոնք ընդգրկված են թեստում (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հ/Հ	Քիմիայի հիմնական բաժիններ
1.	Ընդհանուր քիմիա
2.	Անօրգանական քիմիա
3.	Օրգանական քիմիա
5.	Քիմիան և կյանքը

4. ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Քննական սենյակում թույլատրվում է ունենալ՝

- քիմիական տարրերի պարբերական աղյուսակ
- աղերի լուծելիության աղյուսակ
- մետաղների լարվածության էլեկտրաքիմիական շարքը
- հաշվիչ